

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ**

Ստուգաթերթ N 31

**Մասնագիտացված բժշկական օգնություն (գործառույթներ) Ախտաբանաանատոմիական
(ՏԳՏԴ ծածկագիր՝ 86)**

_____	_____	_____
(տեսչության տարածքային մարմնի անվանումը)	(գտնվելու վայրը)	(հեռախոսահամարը)
_____	_____	_____
(ստուգող անձի պաշտոնը)	(ազգանունը, անունը, հայրանունը)	
_____	_____	_____
(ստուգող անձի պաշտոնը)	(ազգանունը, անունը, հայրանունը)	
_____	_____	_____
(ստուգող անձի պաշտոնը)	(ազգանունը, անունը, հայրանունը)	
ստուգման սկիզբը (ամսաթիվը) _____	ավարտը _____	
_____	_____	_____
(տնտեսավարող սուբյեկտի անվանումը)	(ՀՎՀՀ-ն)	
_____	_____	_____
(տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը)	(հեռախոսահամարը)	
_____	_____	_____
(տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի ազգանունը, անունը, հայրանունը)	(հեռախոսահամարը)	

Ստուգման հանձնարարագիր _____ ում կողմից _____ երբ է տրված _____

Ստուգման նպատակը/Ընդգրկված հարցերի համարներ _____

№	Հարց	այո	ոչ	չ/այ	կշիռ	հղում նորմատիվ ակտին	Ստուգման մեթոդ	Մեկնաբանություն
1.	Ախտաբանաանատոմիական բաժանմունքը տեղակայված է առանձին մասնաշենքում՝ ավտոփոխադրամիջոցների և սայլակների (հիվանդանոցի հիվանդասենյակային մասնաշենքերից) մոտեցման հարմար ուղիներով և հետիոտնի անցուղիներով:				2	Հղում 1, կետ 3	տեսողական	
2.	Ախտաբանաանատոմիական բաժանմունքի նոր կառուցվող մասնաշենքը իր ծիսակատարությունների գոտով հիվանդասենյակների, բնակելի և հասարակական շենքերի պատուհանների տեսանելիության դաշտից դուրս է լինում և ունենում է առնվազն 30 մ հեռավորություն հիվանդասենյակային բաժանմունքներով մասնաշենքերից, պոլիկլինիկայից և սննդի կառուցահատվածից:				2	Հղում 1, կետ 3	տեսողական	
3.	Ախտաբանաանատոմիական բաժանմունքի սպիտակեղենի լվացումը կատարվում է առանձնացված լվացքատանը կամ հիվանդանոցի լվացքատանը՝ որտեղ առանձնացվում է կեղտոտ սպիտակեղենի ընդունման, տեսակավորման սենք, իսկ լվացման արտադրամասում՝ ըստ բաժանմունքի մակնշված լվացքի մեքենա:				2	Հղում 1, կետ 4.	տեսողական փաստաթղթային	
4.	Ախտաբանաանատոմիական բաժանմունքը ապահովվում է էներգիայի սնուցման լրացուցիչ աղբյուրով:				2	Հղում 1, կետ 5	տեսողական	
5.	Ախտաբանաանատոմիական բաժանմունքը ապահովվում է կենտրոնացված ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերով: Ո				3	Հղում 1, կետ 6	տեսողական	
6.	Ախտաբանաանատոմիական բաժանմունքի և հիստոլոգիական լաբորատորիայի մատակարարվող ջրի պահուստային տարողության առկայության դեպքում ջրի որակը համապատասխանում է նորմերին: նշում 1				2	Հղում 1, կետ 6, 36,	լաբորատոր	

7.	Կենտրոնացված ջրահեռացման համակարգի բացակայության դեպքում կեղտաջրերի մաքրումը և վարակազերծումը կատարվում է տեղային մաքրման կայանում:				2	Հղում 1, կետ 6, ենթակետ 3	տեսողական փաստաղթային	
8	Նոր կառուցվող Ախտաբանաանատոմիական բաժանմունքի համար առաջարկվող սենքերի նվազագույն կազմը և մակերեսները համապատասխանում են նորմերին: նշում 2				3	Հղում 1, կետ 7, հավելված 1	Փաստաղթային՝ տարածքի հատակագիծ կամ չափագրքում	
9.	Ապահովված են օդի ուլտրամանուշակագույն մանրէասպան սարքով.				2	Հղում 1, կետ 8	տեսողական	
9.1.	դիահերձարանը				1			
9.2	նախադիահերձարանը				1			
9.3	Ֆիքսացիոնը:				1			
10	Դիահերձարանին հարակից տեղակայված է նախադիահերձարանը, ֆիքսացիոնը, հանդերձարանը, սանհանգույց-ցնցուղարանը և կեղտոտ սպիտակեղենի, բժշկական թափոնի պահման սենքերը:				2	Հղում 1, կետ 9	տեսողական	
11	Դիակների պահպանման, հանդերձավորման նոր կառուցվող սենքերը ունեն առանձին մուտք:				2	Հղում 1, կետ 10	տեսողական	
12.	Հերձման և բիօպսիոն նյութերի մշակման հետ կապված սենքերը առանձին միջանցքով կամ նախամուտքով առանձնացված են լինում մյուս կառուցահատվածներից՝ բժիշկների և սպասարկող անձնակազմի համար նախատեսված սենքերից, սպասասրահ, տեղեկատվական-մատենավորման և տեղեկանքների տրման մասից:				2	Հղում 1, կետ 10	տեսողական	
13	Դիակների պահպանման սենքի, նախադիահերձարանի, դիահերձարանի, հանդերձավորման սենքի դռների բացվածքների և սենքերի հատակագծումը ապահովում է դիակներով սայլակների և պատգարակների ազատ անցումը:				2	Հղում 1, կետ 11	տեսողական	
14	Դիակների պահպանման սենքը ապահովված է վերելակով՝ եթե դիակների պահման սենքը և դիահերձարանը նույն հարկում չեն, դիակները դիահերձարան տեղափոխելու համար:				2	Հղում 1, կետ 12	տեսողական	
15	Նոր կառուցվող բաժանմունքի սենքերի, այդ թվում՝ դիահերձարանի հիմնական սենքերի բարձրությունը				2	Հղում 1, կետ 13	տեսողական	

	հատակից մինչ առաստաղ 3 մետրից ոչ պակաս է:						
16.	Սառնարանային տնտեսության սառնարաններում ապահովվում է +2°, + 4° C ջերմաստիճան, չիդենտիֆիկացված դիակների պահպանման համար անհրաժեշտ է ապահովել -15°, -25° C ջերմաստիճան: Ո				3	Հղում 1, կետ 14	տեսողական
17.	Վարակիչ հիվանդություններից մահացածների կամ այդ հիվանդություններից մահացության կասկածի դեպքում դիակը պահվում է անջրաթափանց, ամբողջական և ամուր պարկի մեջ:				2	Հղում 1, կետ 15	Տեսողական, հարցում
18.	Մեկ դիահերձարանի առկայության դեպքում սկզբում հերձում են ոչ վարակիչ հիվանդություններից մահացածների, այնուհետև՝ վարակիչ հիվանդություններից մահացածների դիակները:				2	Հղում 1, կետ 16	Տեսողական, հարցում
19.	Դիահերձման սենյակում օդի օպտիմալ ջերմաստիճանը +20°, +21° C է:				2	Հղում 1, կետ 17	Գործիքաչափում
20.	Ախտաբանաանատոմիական բաժանմունքի սենքերում տեղադրված են մշտական հոսող սառը և տաք ջրով ապահովված լվացարաններ:				2	Հղում 1, կետ 18	տեսողական
21.	Աշխատող անձնակազմի ձեռքերի լվացման համար ապահովված են լվացարաններով՝ առանձնացված այն լվացարաններից, որոնք նախատեսված են գույքը և գործիքները լվանալու համար:				2	Հղում 1, կետ 19	տեսողական
22.	Դիահերձարանում և նախադիահերձարանում տեղադրված են վիրաբուժական հատուկ լվացարաններ՝ ջրի բացթողման արմնկային կամ ոտնակային հարմարանքով:				2	Հղում 1, կետ 20	տեսողական
23.	Սեկցիոն (դիահերձման) սեղանները միացված են սառը և տաք ջրամատակարարման համակարգին: Ունեն շարժական ցնցուղ՝ միացված սառը և տաք ջրամատակարարման համակարգին:				2	Հղում 1, կետ 21	
24.	Սեկցիոն (դիահերձման) սենքի հատակը ապահովվում է հատականցքով: Ո				3	Հղում 1, կետ 21	
25.	Հատականցքում տեղադրված է ցանցորսիչ:				2	Հղում 1, կետ 21	Գործիքաչափում
26.	Ախտաբանաանատոմիական բաժանմունքի սենքերն ապահովված են մաքրման համար հարթ, ամբողջական պատերով, առաստաղով, հատակով:				2	Հղում 1, կետ 22	Տեսողական
27.	Սենքերի պատերը ապահովում են հետևյալ պահանջները.						

27.1	Պատերը մինչ բարձրության կեսը պատված են յուղաներկով կամ հեշտ մաքրվող և ախտահանիչ լուծույթներով հաճախակի մաքրելուց չքայքայվող ջրանթափանց այլ նյութով:				2	Հղում 1, կետ 23	Տեսողական	
27.2	Հերձարանի, նախադիահերձարանի, դիակների պահման սենյակի և սանհանգույցների պատերը մինչև առաստաղ կաֆելապատ են կամ պատված են այլ լվացող նյութով:				2	Հղում 1, կետ 23	Տեսողական	
28.	Սենքերում պատերի և հատակի բոլոր կցորդման տեղերը և անկյունները կլորացված են:				1	Հղում 1, կետ 23	Տեսողական	
29.	Սեկցիոն սեղանները պատրաստված են հեշտ մաքրվող, ջրանթափանց և ախտահանման նկատմամբ կայուն նյութից (մարմար, ցինկապատ երկաթ, չժանգոտվող պողպատ):				3	Հղում 1, կետ 24	Տեսողական	
30.	Սենքերի մակերեսների անհարթությունները, ճեղքերը, սարքավորումների անսարքությունները վերացնում են անմիջապես:				3	Հղում 1, կետ 25	Տեսողական	
31.	Ախտաբանաանատոմիական բաժանմունքի սենքերը սարքավորված են մեխանիկական դրդմամբ արտաձիգ օդափոխանականությամբ:				2	Հղում 1, կետ 26	Տեսողական	
32.	Ամռան ժամանակ ճանճերից պաշտպանվելու համար լուսամուտները ցանցապատված են:				2	Հղում 1, կետ 27	Տեսողական	
33	Հերձումը կատարվում է հատուկ արտահագուստով, հաստ մոմլաթե գոգնոցով, կրկնակոշիկներով, հաստ երկարաթև ձեռնոցներով, ռեսպիրատորով, դիմակով, աչքերի պաշտպանական ակնոցով:				3	Հղում 1, կետ 28	Տեսողական	
34.	Ունեն հակահամաճարակային ռեժիմի հսկողությունը իրականացնող պատասխանատու:				3	Հղում 1, կետ 29	փաստաթղթա յին	
35.	Սենքերի մաքրման համար հակահամաճարակային ռեժիմի հսկողությունը իրականացնող պատասխանատուի կողմից սահմանված են ժամանակացույցեր:				2	Հղում 1, կետ 29	փաստաթղթա յին	
36.	Դիահերձարանի և դիակների պահպանման սենքի հիմնական («գլխավոր») մաքրումը.					Հղում 1, կետ 29	Տեսողական հարցում	
36.1	Օգտագործում են 3-5% քլորամինի լուծույթ կամ 2,5% քլորակրի պարզեցված լուծույթ,				2			

36.2	կատարվում է ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ, ինչպես նաև վարակիչ հիվանդություններից մահացած յուրաքանչյուր դիակի հերձումից հետո:				2			
37	Դիակի հերձումից և մաքրումից հետո հերձման սեղանը, հերձման փոքր սեղանիկը, գործիքները, կշեռքի նժարները, օրգանների լվացման համար լվացարանները և վաննաները, ցանցերը և հատակը մանրակրկիտ լվացվում են սառը, հետո՝ տաք ջրով /շարժական ցնցուղով/, հետո ախտահանվում ՀՀ ԱՆ սահմանված կարգով թույլատրված որևէ ախտահանիչ նյութի լուծույթով՝ համապատասխան վերջինիս ուղեկցող փաստաթղթի:				3	Հղում 1, կետ 30	Տեսողական հարցում	
38.	Հատուկ վտանգավոր վարակներից մահացածների դիակների բոլոր նյութերը, արյան շիճուկը նախօրոք վնասագերծվում են, հետո միայն լցնում ընդհանուր կոյուղին:				3	Հղում 1, կետ 32	Տեսողական հարցում	
39.	Դիակների հանդերձավորումը կատարվում է հատուկ դրա համար հատկացված սենյակում: Դիակների հանդերձավորում դիահերձարանում և դիակների պահպանման սենյում չի կատարվում:				2	Հղում 1, կետ 34	Տեսողական	
40.	Հիստոլոգիական լաբորատորիայի սենյերն ապահովված են որակյալ մաքրման համար հարթ, ամբողջական, պատերով, առաստաղով, հատակով, սարքավորումներով և գույքով:				3	Հղում 1, կետ 37	Տեսողական	
41.	Հիստոլոգիական լաբորատորիայի նորակառույց սենյերի պատերը մինչ բարձրության կեսը պատված են յուղաներկով կամ հեշտ մաքրվող և ախտահանիչ լուծույթներով հաճախակի մաքրելուց չքայքայվող ջրանթափանց նյութով:				3	Հղում 1, կետ 37	Տեսողական	
42.	Հիստոլոգիական լաբորատորիայի սենյերի նվազագույն կազմը և մակերեսները համապատասխանում են նորմերին: նշում 2				3	Հղում 1, կետ 38 հավելված 2	Փաստաղթային՝ տարածքի հատակագիծ կամ չափագրում	
43.	Հիստոլոգիական լաբորատորիան սարքավորված է քարշիչ պահարանով: Ո				3	Հղում 1, կետ 39	Տեսողական	
44.	Ցնդող քիմիական և թունավոր նյութերի լցումը, ռեակտիվների պատրաստումը, ծծմբաթթվային պղնձի շիկացումը, նյութերի փաթեթավորումը, մանրացումը, կշռումը և այլն, կատարվում է քարշիչ պահարանում:				3	Հղում 1, կետ 39	Տեսողական	

45.	Յնդող քիմիական և թունավոր նյութերի լցման, ռեակտիվների պատրաստման, ծծմբաթթվային պղնձի շիկացման, նյութերի փաթեթավորման, մանրացման, կշռման և այլ գործողությունների համար առանձնացված են սարքեր և սպասք (կշեռքներ, ձագարներ, հավանգներ):				2	Հղում 1, կետ 39	Տեսողական	
46.	Թունավոր նյութերը պահվում են առանձին սենյակում, որը ունի երկաթյա ցանցով ցանցապատված լուսամուտներ, իսկ դռները երեսապատված են երկաթով՝ մետաղական, կամ չիչկիզվող պահարանում:				3	Հղում 1, կետ 40.	Տեսողական	
47.	Թունավոր նյութերը պահվում են չիրկիզվող պահարաններում: Ո				3	Հղում 1, կետ 40.	Տեսողական	
48.	Հատուկ թունավոր նյութերը (սուլեմա և այլն) պահվում են չիրկիզվող պահարանների ներքևի դարակաշարերին:				2	Հղում 1, կետ 41.	Տեսողական	
49.	Բոլոր ցնդող քիմիական նյութերը (քսիլոլ, տոլուոլ, քլորոֆորմ, անիլին, ֆորմալին և այլն) պահվում են պինդ փակվող ապակյա ամանեղենում (կիպահղկած խցաններով բյուքսերում և բանկաներում), փակ պահարանում՝ հեռու տաքացուցիչ սարքերից և բաց կրակից: Ցնդող նյութերը բացվում են միայն տվյալ նյութի օգտագործման պահին:				3	Հղում 1, կետ 42.	Տեսողական, հարցում	
50.	Թթուները և հիմքերը պահվում են կիպահղկած խցաններով ապակյա ամանեղենում պահարանների ստորին դարակներում, ռեակտիվներից և ներկերից առանձին: Խիտ թթուների նոսրացման ժամանակ, ցայտումից խուսափելու համար թթուն ավելացնում են ջրի վրա և ոչ թե հակառակը: Ռեակտիվների եռման ժամանակ անոթը (փորձանոթներ) խցանով չեն ծածկում:				2	Հղում 1, կետ 43.	հարցում	
51.	Էլեկտրական և գազի տաքացնող սարքերը (էլեկտրասալիկներ, ջրային բաղնիք) տեղադրված են հրակայուն նյութերից պատրաստված տակդիրների վրա, հեռու պայթյունավտանգ և այրվող նյութերից: Պայթյունավտանգ և այրվող նյութերը չեն դնում այն սեղանների վրա, որոնց վրա դրված են տաքացնող սարքեր և բաց կրակով սարքեր (գազ, հրաձորան, սպիրտայրոց և այլն թերմոստատներում չեն դնում պայթյունավտանգ և այրվող նյութեր (օրինակ՝ եթեր) և դրանցում չեն չորացնում կինոժապավեններ:				3	Հղում 1, կետ 44.	Տեսողական, հարցում	
52.	Թաց արխիվը պահվում է հատուկ սենքում՝ պինդ փակված տարողություններում:				3	Հղում 1, կետ 46.	Տեսողական	

53.	Թաց արխիվի պահման ժամկետի լրացման դեպքում նյութերը հեռացնում են սահմանված կարգով՝ որպես բժշկական թափոն:				3	Հղում 1, կետ 46. Հղում 2,	Տեսողական, փաստաթղթային	
54.	Թունավոր նյութերի և դրանց փաստաթղթերի պահպանման պատասխանատուն հանդիսանում է լաբորատորիայի ղեկավարը, կամ այն անձը, որին հրամանով լիազորված է այդ պարտականությունը:				2	Հղում 1, կետ 47.	փաստաթղթային	
55.	Բաց թողնվող թունավոր նյութերի յուրաքանչյուր փաթեթի վրա փակցվում է պիտակ՝ նշելով թունավոր նյութի անվանումը, «Թունավոր է» և «Վարվել զգույշ» նախազգուշացումով:				3	Հղում 1, կետ 48.	Տեսողական, փաստաթղթային	
56.	Պահեստից կամ դեղատնից թունավոր նյութերը բացթողնելուց առաջ դրանց պահպանման համար պատասխանատու անձը անձամբ ստուգում է բացթողման հիմնավորումը, բացթողնվող թունավոր նյութերի համապատասխանությունը ուղեկցող փաստաթղթերին, փաթեթավորման ճշգրտությունը, որից հետո ստորագրում է պահանջագրի պատճենում:				2	Հղում 1, կետ 49.		
57.	Ախտաճնության 1-2-րդ խմբերի միկրոօրգանիզմներով (բացի 1-ին խմբի վիրուսներից) հարուցված վարակիչ հիվանդություններից մահացածների դիակները ենթարկվել են ախտաբանաանատոմիական, մանրէաբանական (վիրուսաբանական), շճաբանական հետազոտությունների: նշում 3				3	Հղում 3, կետ 1	Տեսողական, փաստաթղթային	
58.	Բժիշկները տիրապետում են առանձին վարակիչ հիվանդությունների դեպքերի ստանդարտ բնորոշումներին: նշում 3 և 4				3	Հղում 4, կետ 5 Հղում 5	Փաստաթղթային, հարցում	
59.	Բժիշկները տիրապետում են առանձին վարակիչ հիվանդությանների (հաստատված և/կամ կասկածելի) դեպքերի վերաբերյալ շտապ հաղորդումների ընթացակարգին: նշում 5				3	Հղում 4, կետ 5 Հղում 6 Հավելված 13	Փաստաթղթային	
60.	Վարակիչ հիվանդությունների դեպքերն անհատապես հաշվառվում են «Վարակիչ, այդ թվում՝ մակաբուծային հիվանդությունների հաշվառման մատյանում»: նշում 5				3	Հղում 4, կետ 14, Հղում 7 Հավելված 12	Փաստաթղթային Տեսողական զննում	

61.	Ատիպիկ թոքաբորբի կասկածով մահացած անձանցից ախտաբանաանատոմիական նմուշառումն իրականացվում է սահմանված կարգով: նշում 6				3	Հղում 8, գլուխ 4	Փաստաթղթա յին Տեսողական զննում	
-----	--	--	--	--	---	------------------	--------------------------------	--

Հղում 1. ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի հուլիսի 31-ի N 11-Ն հրամանով հաստատված «Ախտաբանաանատոմիական բաժանմունքների, հյուսվածքաբանական լաբորատորիաների տեղակայմանը, կառուցվածքին, ներքին հարդարմանը, գույքի և սարքավորումների շահագործմանը, միկրոկլիմային, օդափոխանակությանը, ջրամատակարարմանը և ջրահեռացմանը, սանիտարահակահամաճարակային ռեժիմին ներկայացվող պահանջներ» N 2-III-3.3.1.-026-12 սանիտարահամաճարակաբանական կանոնները և նորմեր

Հղում 2. ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 24-ի «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2-1.3-3 սանիտարական կանոններ և նորմեր», «Բժշկական թափոնների անվտանգ գործածության» ուղեցույց» N 03-Ն հրաման

Հղում 3. ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի օգոստոսի 25-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված «Մարդու համար ախտածնության 1-2-րդ խմբերի միկրոօրգանիզմների միջոցով հարուցված հիվանդությունների օջախներում իրականացվող ախտաբանաանատոմիական աշխատանքին ներկայացվող պահանջներ» ՍԿ N 3.13.1,7.006.08 սանիտարահամաճարակային նորմեր և կանոններ

Հղում 4. ՀՀ առողջապահության նախարարի 17.12.10թ. N 35-Ն հրամանով հաստատված «Վարակիչ հիվանդությունների «իրական ժամանակում» էլեկտրոնային համաճարակաբանական հսկողություն» ՍԿ 3.1.1-018-10 սանիտարահամաճարակային նորմեր և կանոններ

Հղում 5. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 31-Ն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի հունվարի 11-ի թիվ 02-Ն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 258-Ն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 301-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի նախագահի 2011 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 325-Ն «Կենսաբանական, քիմիական և ճառագայթային գործոններով պայմանավորված հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ ներկայացնող դեպք՝ երևույթների (վարակիչ հիվանդությունների, թունավորումների, ճառագայթային ախտահարումների դեպքեր) ստանդարտ բնորոշումները հաստատելու մասին» համատեղ հրաման

Հղում 6. ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 20-Ն «ՀՀ իմունականխարգելման գործընթացի կազմակերպում և իրականացում» սանիտարահամաճարակային ՍԿ 3.1.6.009-08 կանոններ և նորմեր

Հղում 7. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 21-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի համաճարակաբանական հսկողություն» ՍԿ 3.1.1-010-08 սանիտարահամաճարակային կանոնների և նորմեր»

Հղում 8 - ՀՀ առողջապահության նախարարի 2011 թվականի օգոստոսի 9-ի թիվ 08-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ստիպիկ թոքաբորբի համաճարակաբանական հսկողություն» ՍԿ 3.1.1-0-22-11 սանիտարահամաճարակաբանական կանոններ և նորմեր

նշում 1 Կենտրոնացված ջրամատակարարումը կարող է լինել կոմունալ /եթե սպասարկում է որևէ մասնագիտացված կազմակերպություն/ կամ գերատեսչական: Գերատեսչական ջրմուղը իրենից ներկայացնում է տվյալ օբյեկտին ջուր մատակարարող առանձին համակարգ՝ որը կազմված է առնվազն ջրամատակարարման աղբյուրից, ջրատարից, շենք-շինությունների ներքին ցանցից, ջրի վարակազերծման, անհրաժեշտության դեպքում՝ մաքրման կառույցից, կարող է լինել նաև ՕԿՋ: Սպասարկումը կազմակերպվում է անմիջապես տվյալ օբյեկտի կողմից: Անհրաժեշտ է պարզել արդյոք առկա է կենտրոնացված համակարգով տրվող խմելու ջրի պահուստային տարողություն: Վերջինիս առկայության դեպքում նմուշները վերցնում են մինչև պահուստային տարողությունը և դրանից հետո, եթե ջրի որակը փոխվում է պահուստային տարողություն մտնելուց հետո՝ առկա է երկրորդային աղտոտում: Հետազոտվում է մանրէաբանական և զգայորոշման ցուցանիշներով:

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՆՐԷԱՐԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԱԿԱՐԹԻՇԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆՈՐՄԵՐ

Ցուցանիշներ	Չափման միավորներ	Նորմաներ
Ջերմատուլերանտ կոլիֆորմ մանրէներ 1/	100 մլ-ում մանրէների քանակ	Բացակայություն
Ընդհանուր կոլիֆորմ մանրէներ	100 մլ-ում մանրէների քանակ	Բացակայություն
Մանրէների ընդհանուր քանակություն կոլիֆագեր 3/	Գաղութներ առաջացնող մանրէների քանակը 1 մլ-ում	50-ից ոչ ավել
Սուլֆիտներականգնող կլոստրիդիաների սպորներ 4/	Վահանակ առաջացնող միավորների (ՎԱՄ) քանակը 100 մլ-ում	Բացակայություն
Սպորների քանակը 20 մլ-ում	Սպորների քանակը 20 մլ-ում	Բացակայություն
Լյամբլյանների ցիստեր 3/	Ցիստերի քանակը 50 մլ-ում	Բացակայություն

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԶԳԱՅՈՐՈՇԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆՈՐՄԵՐ

Ցուցանիշներ	Չափման միավորներ	Նորմեր, ոչ ավելի
Հոտ	բալեր	2
Համ	-//-	2
Գունավորում	աստիճաններ	20 /35/ 1)
Պղտորություն	ՖՊՄ (ըստ ֆորմազինի) պղտորության միավոր կամ մգ/լ (ըստ կառլինի)	2.6 /35/ 1) 1.5 /2/ 1)

Նշում 2

Սենք	մակերես (մ ²)	ծանոթություն
Վարչատնտեսական մաս		
Բաժանմունքի վարիչ	8	
Անձնակազմի աշխատասենյակ	12	
Սանհանգույց	3	
Տեղեկատվական-մատենավորման, տեղեկանքների տրման մաս, Փաստաթղթերի արխիվ	10	
Սպասասրահ	10	
Ինվենտարի, մաքուր սպիտակեղենի պահման սենք	3	
Սեկցիոն մաս		
Դիակների պահպանման սենք	6	1 սառնարանին
Դիակի հանդերձավորման սենք	10	
Նախադիահերձարան	8	
Ֆիքսացիոն	6	
Թաց աուտոպսիոն և բիոպսիոն նյութի արխիվ	6	
Դիահերձարան	18	1 սեկցիոն սեղանի համար, 2-րդի համար ավելացվում է 12 մ ²
Հանդերձարան, սանհանգույց-ցնցուղարան	4	
Կեղտոտ սպիտակեղենի պահման սենք	4	
Բժշկական թափոնի պահման սենք	4	

Սենք	մակերես (մ ²)	ծանոթություն
Բիոպսիոն և աուտոպսիոն նյութի ընդունման և գրանցման սենք	6	
Բիոպսիոն և աուտոպսիոն նյութի հետազոտման սենք	14	
Ռեակտիվների և թունավոր և ցնդող նյութերի պահեստ	6	
Թաց աուտոպսիոն, բիոպսիոն նյութի, միկրոպրեպարատների պահման արխիվ	8	

Նշում 3 Ստուգողի կողմից ընտրողաբար նայվում է «Ախտաբանաանատոմիական եզրակացությունները» և պարզաբանվում արդյոք դրված ախտորոշումները համապատասխանում են հիվանդությունների ստանդարտ բնորոշումներին:

նշում 4 Նշել նայված ախտաբանաանատոմիական եզրակացությունների թիվը:

նշում 5

ՀՀ առողջապահության նախարարություն		Բժշկական փաստաթուղթ Ձև ՇՀ 1
Կազմակերպության անվանում		Հաստատված է ՀՀ ԱՆ « _____ » _____ թ. N _____ հրամանով

ՇՏԱՊ ՀԱՂՈՐԴՈՒՄ
ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԹՈՔԱԲՈՐԲԻ, ՍՆՆԴԱՅԻՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ՀԵՏՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԱՆԲԱՐԵՀԱԶՈՂ ԵՎ ՄԱՀՎԱՆ
ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Ախտորոշում

հաստատված է լաբորատոր այր, ոչ (ընդգծել), եթե այո՝ նշել հայտնաբերված հարուցիչը

2. Ազգանուն, անուն, հայրանուն _____

3. Սեռ _____

4. Տարիք (մինչև 14տ. երեխաների համար՝ ծննդյան ամսաթիվ) _____

5. Բնակության վայր _____ տարածաշրջան _____

_____ փողոց _____

տուն N _____

բն. N _____

_____ հեռախոս _____

սեփական, կոմունալ, հանրակացարան (ընդգծել) , գրանցման վայրից տարբեր բնակվելու դեպքում նշել նաև բնակության գտնվելու վայրը

6. Աշխատանքի (ուսումնական և մանկական կազմակերպություն) գտնվելու վայր, անվանում, հեռախոս _____

7. Ամսաթվեր՝

ա) հիվանդացման _____

բ) առաջին դիմումի (հայտնաբերման) _____

գ) ախտորոշման _____

դ) աշխատանքի (ուսումնական և մանկական կազմակերպություն) վերջին հաճախման _____

ե) հոսպիտալացման _____

8. Հոսպիտալացման վայր _____

_____ հոսպիտալացման տրանսպորտային

միջոց _____

9. Տուբերկուլյոզի դեպքում նշել ռենտգենաբանական հետազոտության և մանրէազատման

տվյալները _____

10. Եթե թունավորում է՝ որտե՞ղ է տեղի ունեցել, ինչո՞վ է թունավորվել տուժածը, որտեղի՞ց է ձեռք բերվել _____

11. Եթե պատվաստվել է՝ ե՞րբ է պատվաստվել և պատվաստման տեսակը, պատվաստման վայրը _____

12. Իրականացված առաջնային հակահամաճարակային միջոցառումներ և լրացուցիչ _____

տեղեկություններ _____

13. Հիվանդությունը հայտնաբերվել է բուժօգնության դիմելու ընթացքում, այդ թվում՝ ստացիոնարում հետազոտվելիս, կանխարգելիչ բժշկական զննությունների, բակային համայնքի ժամանակ և այլն (ընդգծել և լրացնել)

14. ՊՀՀ տեսչության մարզային/տարածքային կենտրոններ առաջնային հաղորդման տվյալներ՝

ա) հաղորդողի անուն, ազգանուն _____

բ) ամսաթիվ և ժամ _____ հեռախոս և այլն _____

գ) հաղորդումն ընդունողի անուն, ազգանուն _____

15. Շտապ հաղորդման ուղարկման ամսաթիվ և ժամ _____

հաղորդում ուղարկողի անուն, ազգանուն, ստորագրություն _____

ՊՀՀ տեսչության մարզային/տարածքային կենտրոնների գրանցամատյանում գրանցման N _____

Հաղորդում ստացողի անուն, ազգանուն, ստորագրություն _____

Սույն հաղորդման քարտը կազմում են բուժաշխատողները, ցանկացած հանգամանքներում, վարակիչ հիվանդություն, թոքաբորբ, սննդային, սուր մասնագիտական թունավորում, հետպատվաստումային անբարեհաջող դեպք հայտնաբերելու, դրանց նկատմամբ կասկածի, ախտորոշումը փոխվելու, ինչպես նաև մահվան դեպքում:

Ուղարկվում է հիվանդի բնակության վայրի ՊՀՀ տեսչության մարզային/տարածքային կենտրոններ հայտնաբերման պահից ոչ ուշ, 24 ժամվա ընթացքում՝ հեռախոսով նախապես տվյալների հաղորդման պայմաններում:

Ախտորոշման փոփոխման դեպքում, հաղորդման կետ 1-ում նշվում է փոփոխված ախտորոշումը, վերջինիս ամսաթիվը, նախնական ախտորոշումը:

Հաղորդումն ուղարկվում է նաև ընտանի կամ վայրի կենդանիների կողմից կծված, ճանկոտված, թքոտված դեպքերի համար, որոնք պետք է դիտել որպես կատաղություն հիվանդության կասկածելի դեպքեր:

Հավելված 12

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կազմակերպության անվանումը

Բժշկական փաստաթուղթ

Մ Ա Տ Յ Ա Ն

Վարակիչ, այդ թվում մակաբուժային հիվանդությունների հաշվառման

Սկիզբ «-----» -----200 թ

Վերջ «-----» ----- 200 թ

վարակիչ և մակաբուժային հիվանդության անվանում -----

N	Հետախուսով հաղորդման (ընդունման) ամսաթիվ և ժամ և առաջնային շտապ հաղորդման ուղարկման (ստացման) ամսաթիվ (ով է ուղարկել), (ով է ընդունել)	Հարորում ուղարկող բուժակնվարժեիչ կազմակերպության անվանում	Ա. Ա. Հ	Տարիք (մինչև 3տ երեխաների համար նշել ծնվելու ամսաթիվը և տարին)	Հասցե քաղաք. գյուղ. փողոց, տուն, բն.	Աշխատանքի վայրի, նախադպրոցական դպրոցական կազմակերպության անվանում (խումբ, դասարան)վերջին հաճախման ամսաթիվ	Առաջին անգամ դիմելու ամսաթիվ	Հիվանդանալու ամսաթիվ	Վիստորոշման և դրա հաստատման ամսաթիվ	Հոսպիտալացման տեղ և ամսաթիվ	Փոփոխված (ճշտված)վիստորոշում և դրա հաստատման ամսաթիվ	Համաճարակաբանական հետազոտության ամսաթիվ, հետազոտողի ազգանուն	Հիվանդության մասին հաղորդում(հիվանդի մշտական բնակության նախադպրոցական դպրոցական, աշխատանքի վայրի ՊՀՀ տեսչության տարածքային կենտրոններ)	Լաբորատոր հետազոտություններ, արդյունք	Ծանոթություններ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

նշում 6 Ատիպիկ թոքաբորբի կասկածով մահացած անձանցից ախտաբանաանատոմիական նմուշառումը

1. Կորոնավիրուսի առկայության վերաբերյալ հետազոտություն կատարելու համար նմուշառում կատարվում է այն անձանցից, ովքեր մահացել են դիախերձման պահից հաշված 24-36 ժամից ոչ ուշ:
2. Դիախերձումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 25.08.08թ. N 15-Ն հրամանով հաստատված «Մարդու համար ախտածնության 1-2-րդ խմբերի միկրոօրգանիզմների միջոցով հարուցված հիվանդությունների օջախներում իրականացվող ախտաբանաանատոմիական աշխատանքին ներկայացվող պահանջներ» N 3.13.1.7.006.08 սանիտարահամաճարակային նորմերի և կանոնների համաձայն:
3. Օրգանների նմուշները վերցնում են մանրէազերծված հերմետիկ փակվող սրվակների կամ փորձանոթների մեջ:
4. Հետազոտության համար նմուշառումը կատարվում է ներքոհիշյալ օրգաններից՝
 - 1) հիվանդների արյուն (հիվանդության 10-րդ օրից սկսած),
 - 2) թոքերից՝ ախտաբանական օջախից և բրոնխների հատվածներից,

3) լյարդից,

4) փայծախից,

5) բրոնխների ախտաբանական օջախի պարունակությունից:

5. 3-5 մլ արյուն վերցնում են ցանկացած խոշոր անոթից (աորտա, թոքային զարկերակ և այլն):

6. Բրոնխային լվացուկ ստանալու համար կտրվում են ախտահարված թոքի գլխավոր բրոնխը, մեջը լցնում 50 մլ մանրէազերծված ֆիզիոլոգիական լուծույթ, բրոնխը սեղմվում է սեղմիչով, 2-3 անգամ այն բարձրացնում և իջեցնում, որպեսզի բրոնխետալ ծառը լցվի հեղուկով, ապա այդ հեղուկից վերցվում է 5-10 մլ և լցվում առանձին սրվակի կամ փորձանոթի մեջ:

7. Թոքաբորբի օջախից մկրատով կտրվում է 2-5 -3 X 3 սմ հյուսվածքի կտոր և տեղավորվում փորձանոթի (սրվակի) մեջ: Հնարավորության դեպքում այնտեղ տեղավորվում է նաև բրոնխի մի հատված:

8. Լյարդի և փայծախի հյուսվածքի նույն չափի հատված վերցվում և տեղավորվում է առանձին փորձանոթի (սրվակի) մեջ:

9. Վերցրած նմուշները տեղավորվում են ամուր փակվող խցանով, մանրէազերծված փորձանոթի մեջ, ախտահանիչ լուծույթով մշակում դրանց արտաքին մակերեսը և մակնշում (նշելով հիվանդի ազգանունը, անունը, հայրանունը, նյութի տեսակը և նմուշառման ամսաթիվը): Կափարիչը (խցանը) հպման տեղում լրացուցիչ ամրացնում են կաչուն ժապավենով և ուղեգրի հետ միասին տեղավորում հերմետիկ տարողության մեջ:

10. Դիահերձման նյութը հետազոտության համար տեղափոխվում է վիրուսաբանական լաբորատորիա -20°C ջերմաստիճանում (թերմոս-սառնարանով կամ չոր սառույցով), ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում:

11. Վիրուսաբանական հետազոտության համար վերցված նմուշները տեղավորում են երկրորդ հերմետիկ տարայում՝ ուղեգրի և պարունակության ցուցակի մեկական օրինակի հետ և մակնշում:

Տեսուչի ստորագրություն _____

Տնտեսվարողի ստորագրություն _____